ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2025թ. հարցման արդյունքների վերլուծություն

Կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժին

Հարցման նպատակն է՝

պարզել բակալավրատի և մագիստրատուրայի շրջանավարտների բավարարվածությունը մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպումից և իրականացումից, պրակտիկաների կազմակերպումից, մատուցվող ծառայություններից և ռեսուրսներից, համալսարանական միջավայրից, գնահատման գործող համակարգից, գնահատման օբյեկտիվությունից և այլն:

Բակալավրատ

Հարցմանը շրջանավարտների մասնակցության ցուցանիշներն ըստ կրթական ծրագրերի հետևյալն է.

Կրթական ծրագիր	ուսան.	մասն.	տոկոս
Անգլերեն լեզու և գրականություն	25	23	92%
Դեկորատիվ - կիրառական արվեստ	8	7	87.5%
Դիզայն	7	4	57.14%
Զբոսաշրջություն	16	16	100%
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	18	16	88.88%
Հայոց լեզու և գրականություն	12	12	100%
Հոգեբանություն	10	9	90%
Պատմություն	5	5	100%
Ռուսերեն լեզու և գրականություն	13	12	92.3%
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	18	9	50%
Ֆինանսներ (ըստ ոլորտի)	16	6	37.5%
Ֆրանսերեն լեզու և գրականություն	6	6	100%
	154	125	81.16%

Մագիստրատուրա

Հարցմանը շրջանավարտների մասնակցության ցուցանիշներն ըստ կրթական ծրագրերի հետևյալն է.

Կրթական ծրագիր	Ուս. տարի	Ուսանող	Մասն.	Տոկոս
Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	2024-25	19	19	100 %
Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	2023-24	13	11	84.62 %
		32	30	93.75%

Բակալավրատ

2024-25 թվականին հարցվածների 39%-ը նշել է, որ իրենց ուսումնառության միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կազմում է 18-20, 45%-ը՝ նշել է 13-17, 16%-ը՝ նշել է 8-12:



Մագիստրատուրա

2024 թվականին հարցվածների 64%-ը նշել է, որ իրենց ուսումնառության միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կազմում է 18-20, իսկ 36%-ը՝ 13-17: 2025 թվականին հարցվածներից 68%-ը նշել է, որ ուսումնառության միջին որակական գնահատականը կազմում է 18-20, իսկ 32%-ը՝ 13-17:



Բակալավրատ

Հարցման մասնակից ուսանողների 47.4%-ը պատրաստվում է շարունակել ուսումը: Հիմնականում մեծ է ցանկությունը «Անգլերեն լեզու և գրականություն», «Հայոց լեզու և գրականություն», «Պատմություն», «Զբոսաշրջություն», «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերի շրջանավարտների մոտ:

Հարցման մասնակիցներից 36.8%-ը արդեն աշխատում է, որից 12%-ը՝ մասնագիտությամբ, իսկ ևս 24.8%-ը արդեն կողմնորոշված է աշխատանքի հարցում:

Բակալավրատ

Աշխատանքի տեսանկյունից առավել բարձր ցուցանիշներ ունեն «Ռուսաց լեզու և գրականություն», «Դեկորատիվ կիրառական արվեստ» և «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրերի շրջանավարտները, որոնց զգալի մասը աշխատում է մասնագիտությամբ:

Ոչ մասնագիտական աշխատանքում աչքի են ընկել «Անգլերեն լեզու և գրականություն», «Զբոսաշրջություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրերի շրջանավարտները:

Մագիստրատուրա

- Աշխատանքային զբաղվածության հարցի վերաբերյալ 2024թ. արդյունքներն ընդգծում են, որ մեծ թվով շրջանավարտներ աշխատում են, սակայն միայն մի մասն է աշխատում մասնագիտությամբ:

2025 թվականին նկատվում է աշխատաշուկայում մասնագիտական զբաղվածության զգալի աճ՝ համեմատած 2024-ի հետ:



Բակալավրատ

- Մասնաճյուղում ուսուցման կազմակերպումից այս տարվա շրջանավարտները հիմնականում բավարարված են:



Բակալավրատ

- Գնահատման գործող համակարգից, օբյեկտիվությունից և թափանցիկությունից նույնպես ուսանողների բավարարվածությունը բարձր է:



Մագիստրատուրա

- 2024 թվականի ուսումնական տարում մատուցվող դասընթացների օգտակարությունը գնահատվել է բարձր, 2025 թվականին ցուցանիշները նվազել են:

Պրակտիկաները դիտարկվում են որպես օգտակար ուսումնական բաղադրիչ, սակայն բարձր գնահատումների նվազման միտումը մտահոգիչ է: 2025թ-ին մասնակիցների 1/4-ը այլևս չի համարում պրակտիկան բավարար չափով արդյունավետ:



Մագիստրատուրա

- Շրջանավարտները շարունակում են բարձր ցուցանիշներ ունենալ մանկավարժական նոր մեթոդների տիրապետման հարցում: Միևնույն ժամանակ նկատվում է ինքնագնահատականի որոշակի նվազում, ինչը կարող է պայմանավորված լինել նոր կրթական չափորոշիչների ներդրման հետ կապված փոփոխություններով:

Այդ պատճառով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մագիստրոսական ծրագրերի գործնական բաղադրիչի ամրապնդմանը և շրջանավարտների շարունակական մասնագիտական զարգացմանը:



Մագիստրատուրա

ՏՀՏ գործիքներին տիրապետման մակարդակը շարունակում է մնալ բարձր (գնահատականները հիմնականում 4 կամ 5 են):

2025թ. այս ցուցանիշը նախորդ տարվա համեմատ նվազել է՝ կազմելով 47% (նախորդ տարի՝ 91%), որը զգուշացնող ազդակ է՝ ուսումնասիրելու դասավանդվող ՏՀՏ բովանդակությունը, գործնական կիրառումները և չափորոշչային պահանջները:



Բակալավրատ

Ավարտական աշխատանքի գիտական ղեկավարի աջակցությունից բավարարվածությունը կրթական ծրագրերում գնահատվել է 4.0 – 5.0 միջակայքում:

5.0 - «Դիզայն», «Ռուսաց լեզու և գրականություն» ծրագրերում

4.9 - «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ծրագրերում

4.8 - «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Զբոսաշրջություն» ծրագրերում

4.7 - «Հայոց լեզու և գրականություն»

Բակալավրատ

Ավարտական աշխատանքի գիտական ղեկավարի աջակցությունից բավարարվածությունը կրթական ծրագրերում գնահատվել է 4.0 – 5.0 միջակայքում:

4.6 - «Հոգեբանություն»

4.3 - «Դեկորատիվ կիրառական արվեստ»

4.2 - «Անգլերեն լեզու և գրականություն»

4.0 - միջին գնահատական է գրանցվել «Ֆինանսներ» կրթական ծրագրերում

Մագիստրատուրա

Մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքից 2024-ին շրջանավարտները լիովին բավարարված են եղել: 2025-ի ցուցանիշը նույնպես վկայում է բավարարվածության բարձր մակարդակի մասին, սակայն այն ցույց է տալիս, որ որոշակի բարելավման կարիք կա: 2025 թվականի փոքր նվազումը կարող է դիտվել որպես ուշադրության արժանի ազդակ՝ որ բոլոր ուսանողները ստանան անհրաժեշտ աջակցություն:



Մագիստրատուրա

Առաջարկվում է՝

- խուսափել մասնագետներին մեծաքանակ աշխատանքների ղեկավար նշանակելու պրակտիկայից, ինչը թույլ կտա յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ անհատական մոտեցում ապահովել,
- թեզերի ղեկավարման համար ներգրավել արտաքին շահակիցներ,
- ապահովել պարբերական հետադարձ կապը՝ ուսանող-ղեկավար համագործակցության որակի բարելավման նպատակով:

Բակալավրատ

Ամփոփիչ ատեստավորման աշխատանքի պաշտպանության օբյեկտիվությունից ըստ մասնաճյուղի բավարարվածության գնահատականի միջինը 4.4 միավոր է.



Մագիստրատուրա

Չնայած մի փոքր նվազմանը՝ օբյեկտիվության ընկալման ընդհանուր մակարդակը շարունակում է բարձր մնալ: Սակայն այս միտումը կարող է ազդակ լինել՝ ավելացնելու վերահսկողական և հաղորդակցման արդյունավետությունը՝ ատեստավորման գործընթացների նկատմամբ:



Բակալավրատ

- Համալսարանում առկա ռեսուրսներից ընդհանուր բավարարվածությունը բավարար է: Լսարանների վիճակից և կահավորանքից բավարարվածությունը համեմատաբար ցածր է Բնական գիտությունների և Կիրառական արվեստի ֆակուլտետներում:



Բակալավրատ

Գրադարանում առկա մասնագիտական գրականությունից, ընթերցասրահի սպասարկումից և էլեկտրոնային գրադարանից բավարարվածությունը հիմնականում գնահատվել է լավ կամ միջին:



Մագիստրատուրա

Մասնաճյուղում առկա ռեսուրսներից ընդհանուր բավարարվածությունը բավարար է: Էլեկտրոնային գրադարանից բավարարվածությունը համեմատաբար ցածր է և՛ 2024 թվականին, և՛ 2025 թվականին: 2024 թվականի ցուցանիշի համեմատ արդյունքները 2025 թվականին նվազել են:



Բակալավրատ

- Մասնաճյուղի ղեկավարությունից, ֆակուլտետի ղեկավարությունից և պրոֆեսորադասախոսական կազմից շրջանավարտների բավարարվածությունը գնահատվել է բավականին բարձր:



Մագիստրատուրա

«Որքանո՞վ եք գոհ մասնաճյուղի և ֆակուլտետի ղեկավարությունից, պրոֆեսորադասախոսական կազմից, ուսանողների դիմումներին և բողոքներին արձագանքելու ընթացակարգերից և մեխանիզմներից» հարցի վերաբերյալ ստացված պատասխանների հիման վրա գրաֆիկը ունի հետևյալ տեսքը:



Բակալավրատ

- Ուսանողական կառույցներից, ուսանողների դիմումներին և բողոքներից արձագանքման ընթացակարգից բավարարվածությունը նույնպես բարձր է, սակայն ունի ուշադրության և հետևողականության պահանջ:



Բակալավրատ





Նշված գծապատկերներից ակնհայտ է, որ մասնաճյուղի կողմից կոռուպցիոն ռիսկերի նվազման և կոռուպցիոն երևույթների դրսևորման բացառման համար իրականացվող աշխատանքները արդարացված են։

Մագիստրատուրա

Բերված գծապատկերներից ակնհայտ է, որ մասնաճյուղի կողմից կոռուպցիոն ռիսկերի նվազման և կոռուպցիոն երևույթների դրսևորման բացառման համար իրականացվող աշխատանքները արդարացված են:



Մագիստրատուրա

«Ուսումնառության ընթացքում հարկադրվա՞ծ եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով» հարցին 2024 և 2025 թվականներին բոլոր հարցվածները (100%) նշել են, որ մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով հարկադրված վճարելու դեպքեր չեն եղել:



Բակալավրատ

Հարցման մասնակից շրջանավարտների 94.4%-ը նշել է, որ խորհուրդ կտա իր մերձավորների կրթություն ստանալ ԵՊՀ ԻՄ-ում:



Մագիստրատուրա

Հարցման մասնակից 2024 թվականի շրջանավարտների 100%-ը նշել է, որ խորհուրդ կտա իր մերձավորներին կրթություն ստանալ ԵՊՀ ԻՄ-ում,

2025 թվականի շրջանավարտների 95%-ը նշել է, որ խորհուրդ կտա, 5%-ը՝ ոչ:



Բակալավրատ

ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից ընդհանուր առմամբ շրջանավարտների բավարարվածությունը ունի բարձր ցուցանիշներ, որոնք ներկայացված են գրաֆիկում.



Մագիստրատուրա

- «Ինչպե՞ս եք գնահատում ԵՊՀ ԻՄ-ում ստացած Ձեր կրթությունը» հարցին նախորդ տարվա ցուցանիշի համեմատ նվազել է 0.5 միավորով, ինչը զգալի տարբերություն է:

Սա վկայում է ուսանողների ընդհանուր բավարարվածության որոշակի նվազման մասին, ինչը լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի:



ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

- «Կրթության բարձր որակը»
- «Պրոֆեսիոնալ դասախոսական կազմը»
- «Մայրաքաղաքից ժամանող դասախոսների առկայությունը»
- «Ղեկավարության սրտացավությունը»
- «ԿԲ-ից եկող դասախոսական կազմը»
- «Մարզի միակ համալսարան լինելը»
- «Ուսանողների համար արտահամալսարանական դասընթացների կազմակերպում»
- «Մասնաճյուղում կա լավ դասախոսական կազմ՝ օժտված հիանալի մարդկային որակներով»

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

- «Վարձավճարի ավելի էժան լինելը, քան Երևանի բուհերինը»
- «Ուսումնական ծրագրերի բազմազանությունը»
- «ՈՒսանողակենտրոն մոտեցումը»
- «ՈՒԽ-ի աշխատանքը»
- «Աշխարհագրական դիրքը»
- «Հետաքրքիր միջոցառումների կազմակերպումը»
- «Մոտակա սննդի կետերի առկայությունը»

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

- «2-րդ օտար լեզվի ընտրության հնարավորության բացակայությունը»
- «Երբեմն լսարանների խնդիր է լինում, ուսանողներին տանում են տեղից-տեղ»
- «Սահմանափակ մասնագիտությունների թիվը»
- «Գործնական աշխատանքների սակավությունը»
- «Տեղացի մասնագետների սահմանափակ ներուժը, մասնագիտական ծրագրերի թարմացման պակասը»,
-

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

- «Շենքային պայմանների և ներքին միջավայրի թերզարգացած վիճակը»
- «Օտար լեզուների դասավանդման ոչ ճկուն համակարգը»
- «Որոշ գրքերի առկա չլինելը գրադարանում, վատ աշխատող համակարգիչների առկայություն (իհարկե, ոչ բոլորն են այդպես)»
- «Մասնագիտական պրակտիկայի քիչ լինելը, օտար լեզուների քիչ կիրառում»
- «Ոչ կահավորված լսարաններ, վատ պետքարաններ»

Մագիստրատուրա

Որպես մասնաճյուղի երեք հիմնական ուժեղ կողմ նշվել են.

·պրոֆեսորադասախոսական կազմի բարձր որակը և պրոֆեսիոնալիզմը,

·կրթական ծրագրի և գիտելիքի փոխանցման բարձր մակարդակը,

·ուսանողակենտրոն և բարեկամական մթնոլորտը:

Որպես մասնաճյուղի թույլ կողմ նշվել են.

·Տեխնիկական և տեխնոլոգիական ապահովվածության խնդիրը,

·Ուսումնական գործընթացի կազմակերպական խնդիրներ - օնլայն ուսուցում, դասաժամերի քիչ քանակ, պրակտիկայի կարճ տևողություն,

·Իրազեկման և տեղեկատվության փոխանակման խնդիրներ:

Առաջարկություններ

·«Ուսանողները անցատոմս ունենան համալսարան մտնելու համար»

·«Պրակտիկայի անցկացումը ավելի նորարարական մեթոդներով լինի»

·«Հաճախակի մոնիթորինգ իրականացնել համալսարանում՝ հաշվի առնելով ուսանողների կարծիքները»

·«Օբյեկտիվ գնահատում»

·«Նախապաշտպանությունը անցնում է շատ թեթև. կան սխալներ, որոնք պետք է ասվեին դրա ընթացքում, բայց ասվեցին պաշտպանության ընթացքում և հանվեց միավոր»

Առաջարկություններ

·«Շատ ավելի լավ և հետաքրքիր կլիներ նոր լեզուներ ավելացնել մեր կրթական ծրագրում, որպեսզի ուսանողները բացի ֆրանսերենից այլ լեզուներ ընտրելու և սովորելու հնարավորություն ունենային»

·«Ժամանակ առ ժամանակ բաց քննարկումներ կազմակերպել դասախոսների անցկացրած դասերի բովանդակության վերաբերյալ ուսանողների կարծիքը լսելու համար, առանց դասախոսների մասնակցության»

·«Առաջարկում եմ բարելավել համալսարանի ջեռուցման համակարգը և սահմանել խիստ վերահսկողություն ջեռուցման համակարգի աշխատանքը կարգավորող աշխատակիցների աշխատանքի նկատմամբ, հատկապես սարսափելի վիճակում է գտնվում համալսարանի 52 Ա լսարանը»:

Շնորհակալություններ

Որոշ շրջանավարտներ նաև շնորհակալություն են հայտնել որակյալ կրթության և ուսանողական հաճելի հիշողությունների համար.

«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ոչ միայն կրթական հաստատություն է, այլև ուսանողակենտրոն ու մտավոր զարգացում խթանող միջավայր»

«Այստեղ ուսումնառությունն ուղեկցվում է բարեկամական մթնոլորտով, փորձառու դասախոսներով և պատասխանատու մոտեցմամբ: ԵՊՀ ԻՄ-ում ստացած գիտելիքն ու արժեքները ձևավորում են վստահություն՝ ինքնադրսևորվելու և մասնագիտական ուղին հստակ ընտրելու հարցում»,

Շնորհակալություններ

·«Իմ կարծիքով՝ ԵՊՀ ԻՄ առանձնանում է նաև այն փաստով, որ ուսանողին տեսնում է որպես անհատ, ոչ թե պարզապես կրթվող: Ուսանողներին տրվում են հնարավորություններ մասնակցելու գիտաժողովների, նախագծերի ու ծրագրերի»

·«Ընդհանուր առմամբ գոհ եմ մեր համալսարանից, շնորհակալ եմ ողջ անձնակազմին մեզ տրված հնարավորությունների և գիտելիքի համար: Անմիջական կապը ղեկավար-ուսխորհուրդ-ուսանող ավելի ամրապնդեց մեր կապը համալսարանի հետ, շնորհակալ ենք»:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ԻՄ

ԿԲՈԱ

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԱԿԱԼԱՎՐԱՏԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (2024-25 ՈՒՍՏԱՐԻ)

09.07.2025թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղն իր ռազմավարությամբ և իր գործունեությամբ մշտապես կարևորել է մասնաճյուղում ուսումնական գործընթացների անխափան և հստակ կազմակերպումը, ուսումնառության գործընթացն ապահովել է անհրաժեշտ ռեսուրսներով և մշտապես բարելավել ու զարգացրել է դրանք, տրամադրել է բարձրակարգ կրթություն՝ այդ գործընթացում ներգրավելով Մայր բուհի և մասնաճյուղի լավագույն պրոֆեսորադասախոսական կազմը, ձգտել է բավարարել իր ներքին և արտաքին շահակիցների պահանջներն ու կարիքները, և ամենակարևորը, մասնաճյուղն իր գործունեությամբ և ձեռքբերումներով ձգտում է դառնալ առաջատար բարձրագույն ուսումնական հաստատություն ո՛չ միայն տարածաշրջանում, այլ նաև Հայաստանում:

Մասնաճյուղի ուսանողակենտրոն գործունեությունն ու թափանցիկ կառավարումը հնարավորություն են տալիս և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցներին մշտապես իրազեկված և տեղակացված լինել բոլոր գործընթացներից, նաև դառանալ դրանց արդյունավետության գնահատման անմիջական մասնակիցներ և իրենց առաջարկներով աջակցել դրանց բարելավմանն ու զարգացմանը: Մասնաճյուղը պարբերաբար անդրադառնում է իր շահակիցների բարձրաձայնած խնդիրներին ու առաջարկներին՝ դրանց լուծման և իրականացման համար պլանավորելով իր հետագա գործունեությունը:

Նշենք, որ մասնաճյուղի կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժինը յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում տարբեր մեխանիզմներով և ուսումնասիրություններով վեր է հանում շահակիցների կարիքները և խնդիրները, հավաքագրում է նրանց առաջարկները, վերլուծում և տրամադրում համապատասխան ստորաբաժանումներին՝ համապատասխան լուծումներ առաջարկելու համար:

Հերթական ամենամյա ուսումնասիրությունը առցանց հարցման միջոցով իրականացվել է մասնաճյուղի 2024-25 ուստարվա շրջանավարտների շրջանում: **Հարցման նպատակն էր** պարզել շրջանավարտների բավարարվածությունը մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպումից և իրականացումից, պրակտիկաների կազմակերպումից, մատուցվող ծառայություններից և ռեսուրսներից, համալսարանական միջավայրից, գնահատման գործող համակարգից, գնահատման օբյեկտիվությունից և այլն:

Հարցումն իրականացվել է անանուն և առցանց, ամփոփիչ ատեստավորման քննությունից հետո, դրանով ապահովելով հարցման օբյեկտիվությունը և առավելագույն անկեղծությունը:

2024-25 ուստարում մասնաճյուղն առկա ուսուցման 12 կրթական ծրագրով ունեցել է 154 շրջանավարտ, որոնցից հարցմանը մասնակցել է **125-ը,** այսինքն շրջանավարտների **81.16%-ը,** որը առցանց հարցումների տեսանկյունից մասնակցության բավականին բարձր ցուցանիշ է:

Հարցմանը շրջանավարտների մասնակցության ցուցանիշներն ըստ կրթական ծրագրերի հետևյալն է.

Կրթական ծրագիր	**ուսան.**	մասն.	տոկոս
Անգլերեն լեզու և գրականություն	25	23	92%
Դեկորատիվ - կիրառական արվեստ	8	7	87.5%
Դիզայն	7	4	57.14%
Զբոսաշրջություն	16	16	100%
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	18	16	88.8%
Հայոց լեզու և գրականություն	12	12	100%
Հոգեբանություն	10	9	90%
Պատմություն	5	5	100%
Ռուսերեն լեզու և գրականություն	13	12	92.3%
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	18	9	50%
Ֆինանսներ (ըստ ոլորտի)	16	6	37.5%
Ֆրանսերեն լեզու և գրականություն	6	6	100%
	154	**125**	**81.16%**

Մասնակցության ցուցանիշներից ակնհայտ է, որ հարցման արդյունքներն արժանահավատ են և կարող են որոշակի վերուծությունների համար հիմք ծառայել:

Ուսումնասիրության մեջ ներառված հարցերը նպատակ ունեն վերլուծելու շրջանավարտների գնահատականը ստացած կրթության, դրա արդյունավետության և ակնկալիքների ապահովման վերաբերյալ:

2024-25 թվականին հարցվածների 39%-ը նշել է, որ իրենց ուսումնառության միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կազմում է 18-20, 45%-ը՝ նշել է 13-17, 16%-ը՝ նշել է 8-12:



Հարցման արդյունքները ընդհանրացված են ըստ կրթական ծրագրերի և ներկայացված են 5 միավորանոց համակարգում միջին գնահատականով կամ տոկոսներով:

Հարցման մասնակից ուսանողների 47.4%-ը **պատրաստվում է շարունակել ուսումը**: Հիմնականում մեծ է ցանկությունը «Անգլերեն լեզու և գրականություն», «Հայոց լեզու և գրականություն», «Պատմություն», «Զբոսաշրջություն», «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերի շրջանավարտների մոտ:

Հարցման մասնակիցներից **36.8%-ը արդեն աշխատում է**, որից **12%-ը՝ մասնագիտությամբ**, իսկ ևս **24.8%-ը արդեն կողմնորոշված է աշխատանքի հարցում**: Աշխատանքի տեսանկյունից առավել բարձր ցուցանիշներ ունեն «Ռուսաց լեզու և գրականություն», «Դեկորատիվ կիրառական արվեստ» և «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրերի շրջանավարտները, որոնց զգալի մասը աշխատում է մասնագիտությամբ: Ոչ մասնագիտական աշխատանքում աչքի են ընկել «Անգլերեն լեզու և գրականություն», «Զբոսաշրջություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրերի շրջանավարտները:

Մասնաճյուղում ուսուցման կազմակերպումից այս տարվա շրջանավարտները հիմնականում բավարարված են:



Ուսուցման մեջ անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել օտար լեզուների իմացության ապահովմանը: Մասնավորապես «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Հոգեբանություն», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Դիզայն» և «Դեկորատիվ կիրառական արվեստ» կրթական ծրագրերի համար:

Գնահատման գործող համակարգից, օբյեկտիվությունից և թափանցիկությունից նույնպես ուսանողների բավարարվածությունը բարձր է:



Ամփոփիչ ատեստավորման աշխատանքի պաշտպանության օբյեկտիվությունից ըստ մասնաճյուղի բավարարվածության գնահատականի միջինը 4.4 միավոր է, Կիրառական արվեստի ֆակուլտետում՝ 4.8 միավոր, Բնական գիտությունների ֆակուլտետում 4.5 միավոր, Հումանիտար և Բնական գիտությունների ֆակուլտետներում 4.4 միավոր: Ամփոփիչ ատեստավորման նախագահները ուսանողների պատրաստվածությունը և ներկայացումները գնահատել են լավ, կրթական որակի հետագա բարելավման ուղղությամբ կատարվել են առաջարկություններ: Արդյունքների հետ կապված խնդիրներ չեն գրանցվել, ֆակուլտետներում բողոքարկումներ չեն արձանագրվել:



Ավարտական աշխատանքի գիտական ղեկավարի աջակցությունից բավարարվածությունը կրթական ծրագրերում գնահատվել է 4.0 – 5.0 միջակայքում: 5.0 գնահատական է գրանցվել «Դիզայն», «Ռուսաց լեզու և գրականություն» ծրագրերում, 4.9 միջին գնահատական է գրանցվել «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ծրագրերում, 4.8՝ «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Զբոսաշրջություն» ծրագրերում, 4.7՝ «Հայոց լեզու և գրականություն», 4.6՝ «Հոգեբանություն», 4.3՝ «Դեկորատիվ կիրառական արվեստ»,

4.2՝ «Անգլերեն լեզու և գրականություն» և 4.0 միջին գնահատական է գրանցվել «Ֆինանսներ» կրթական ծրագրերում. ամենացածր միջին գնահատականը «Ֆինանսներ» կրթական ծրագրում է:

Համալսարանում առկա ռեսուրսներից ընդհանուր բավարարվածությունը բավարար է: Լսարանների վիճակից և կահավորանքից բավարարվածությունը համեմատաբար ցածր է Բնական գիտությունների և Կիրառական արվեստի ֆակուլտետներում: Համակարգչային սրահների մատչելիությունից բավարարվածությունը հիմնականում ցածր է Կիրառական արվեստի, Տնտեսագիտության և Բնական գիտությունների ֆակուլտետներում, համացանցի մատչելիությունից՝ Տնտեսագիտության, Բնական գիտությունների և Կիրառական արվեստի ֆակուլտետներում:



Գրադարանում առկա մասնագիտական գրականությունից, ընթերցասրահի սպասարկումից և էլեկտրոնային գրադարանից բավարարվածությունը հիմնականում գնահատվել է լավ կամ միջին:



Մասնաճյուղի ղեկավարությունից, ֆակուլտետի ղեկավարությունից և պրոֆեսորադասախոսական կազմից շրջանավարտների բավարարվածությունը գնահատվել է բավականին բարձր:



Ուսանողական կառույցներից, ուսանողների դիմումներին և բողոքներից արձագանքման ընթացակարգից բավարարվածությունը նույնպես բարձր է, սակայն ունի ուշադրության և հետևողականության պահանջ:







Նշված գծապատկերներից ակնհայտ է, որ մասնաճյուղի կողմից **կոռուպցիոն ռիսկերի նվազման և կոռուպցիոն երևույթների դրսևորման բացառման** համար իրականացվող աշխատանքները արդարացված են:

Հարցման մասնակից շրջանավարտների 94.4%-ը նշել է, որ **խորհուրդ կտա իր մերձավորների կրթություն ստանալ ԵՊՀ ԻՄ-ում:**



ԵՊՀ ԻՄ-ում ստացած **կրթությունից ընդհանուր առմամբ շրջանավարտների բավարարվածությունը** ունի բարձր ցուցանիշներ, որոնք ներկայացված են գրաֆիկում.



Շրջանավարտների կողմից, որպես մասնաճյուղի **ուժեղ կողմեր** նշվել են, մասնավորապես.

- «Կրթության բարձր որակը»
- «Պրոֆեսիոնալ դասախոսական կազմը»
- «Մայրաքաղաքից ժամանող դասախոսների առկայությունը»
- «Ղեկավարության սրտացավությունը»
- «ԿԲ-ից եկող դասախոսական կազմը»

- «Մարզի միակ համալսարան լինելը»
- «Ուսանողների համար արտահամալսարանական դասընթացների կազմակերպում»
- «Մասնաճյուղում կա լավ դասախոսական կազմ օժտված հիանալի մարդկային որակներով»
- «Վարձվճարի ավելի էժան լինելը, քան Երևանի բուհերինը»
- «Ուսումնական ծրագրերի բազմազանությունը»
- «ՈՒսանողակենտրոն մոտեցում»
- «ՈՒԽ-ի աշխատանքը»
- «Աշխարհագրական դիրքը»
- «Հետաքրքիր միջոցառումների կազմակերպումը»
- «Մոտակա սննդի կետերի առկայությունը»

Որպես **թույլ կողմեր** նշվել են.

- «2-րդ օտար լեզվի ընտրության հնարավորության բացակայությունը»
- «Երբեմն լսարանների խնդիր է լինում, ուսանողներին տանում են տեղից-տեղ»
- «Սահմանափակ մասնագիտությունների թիվը»
- «Գործնական աշխատանքների սակավությունը»
- «Տեղային մասնագետների սահմանափակ ներուժը, մասնագիտական ծրագրերի թարմացման պակասը»,
- «Շենքային պայմանների և ներքին միջավայրի թերզարգացած վիճակը»
- «Օտար լեզուների դասավանդման ոչ ճկուն համակարգը»
- «Որոշ գրքերի առկա չլինելը գրադարանում, վատ աշխատող համակարգիչների առկայություն (իհարկե, ոչ բոլորն են այդպես)»
- «Մասնագիտական պրակտիկայի քիչ լինելը, օտար լեզուների քիչ կիրառում»
- «Ոչ կահավորված լսարաններ, վատ պետքարաններ»

Մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման բարելավման համար, **շրջանավարտներն առաջարկել են.**

- «Ուսանողները անցատոմս ունենան համալսարան մտնելու համար»
- «Պրակտիկայի անցկացումը ավելի նորարարական մեթոդներով լինի»
- «Հաճախակի մոնիթորինգ իրականացնել համալսարանում՝ հաշվի առնելով ուսանողների կարծիքները»
- «Օբյեկտիվ գնահատում»
- «Նախապաշտպանությունը անցնում է շատ թեթև. կան սխալներ, որոնք պետք է ասվեին դրա ընթացքում, բայց ասվեցին պաշտպանության ընթացքում և հանվեց միավոր»
- «Շատ ավելի լավ և հետաքրքիր կլիներ նոր լեզուներ ավելացնել մեր կրթական ծրագրում, որպեսզի ուսանողները բացի ֆրանսերենից այլ լեզուներ ընտրելու և սովորելու հնարավորություն ունենային»

- «Ժամանակ առ ժամանակ բաց քննարկումներ կազմակերպել դասախոսների անցկացրած դասերի բովանդակության վերաբերյալ ուսանողների կարծիքը լսելու համար, առանց դասախոսների մասնակցության»
- «Առաջարկում եմ բարելավել համալսարանի ջեռուցման համակարգը և սահմանել խիստ վերահսկողություն ջեռուցման համակարգի աշխատանքը կարգավորող աշխատակիցների աշխատանքի նկատմամբ, հատկապես սարսափելի վիճակում է գտնվում համալսարանի 52 Ա լսարանը»:

Որոշ շրջանավարտներ առաջարկների հետ միասին նաև **շնորհակալություն են հայտնել** որակյալ կրթության և ուսանողական հաճելի հիշողությունների համար, ներկայացնենք ուսանողների կողմից կատարված **մեկնաբանությունները.**

- «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ոչ միայն կրթական հաստատություն է, այլև ուսանողակենտրոն ու մտավոր զարգացում խթանող միջավայր»,
- «Այստեղ ուսումնառությունը ուղեկցվում է բարեկամական մթնոլորտով, փորձառու դասախոսներով և պատասխանատու մոտեցմամբ: ԵՊՀ ԻՄ-ում ստացած գիտելիքն ու արժեքները ձևավորում են վստահություն՝ ինքնադրսևորվելու և մասնագիտական ուղին հստակ ընտրելու հարցում»,
- «Իմ կարծիքով՝ ԵՊՀ ԻՄ առանձնանում է նաև այն փաստով, որ ուսանողին տեսնում է որպես անհատ, ոչ թե պարզապես կրթվող: Ուսանողներին տրվում են հնարավորություններ մասնակցելու գիտաժողովների, նախագծերի ու ծրագրերի»,
- «Ընդհանուր առմամբ գոհ եմ մեր համալսարանից, շնորհակալ եմ ողջ անձնակազմին մեզ տրված հնարավորությունների և գիտելիքի համար: Անմիջական կապը դեկավար-ուսխորհուրդ-ուսանող ավելի ամրապնդեց մեր կապը համալսարանի հետ, շնորհակալ ենք»:

Կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժին

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
(2023 – 24, 2024 - 25 ՈՒՍՏԱՐԻՆԵՐ)

27.06.2025թ.

«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժինը հերթական ամենամյա ուսումնասիրությունը առցանց հարցման միջոցով իրականացրել է մասնաճյուղի 2023–2024, 2024-2025 ուստարիների **մագիստրատուրայի** շրջանավարտների շրջանում:

Հարցման նպատակն էր՝ պարզել շրջանավարտների բավարարվածությունը մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպումից և իրականացումից, պրակտիկաների կազմակերպումից, մատուցվող ծառայություններից և ռեսուրսներից, համալսարանական միջավայրից, գնահատման գործող համակարգից, գնահատման օբյեկտիվությունից և այլն:

Հարցումն իրականացվել է անանուն և առցանց, մագիստրոսական թեզերի պաշտպանությունից հետո՝ դրանով ապահովելով հարցման օբյեկտիվությունը և առավելագույն անկեղծությունը:

2023–24 ուստարում մասնաճյուղը հեռակա ուսուցման 1 կրթական ծրագրով տվել է **13** շրջանավարտ, որոնցից հարցմանը մասնակցել է 11-ը (կազմում է հարցվողների 84.62%-ը), 2024 - 25 ուստարում՝ **19** շրջանավարտ, որոնցից հարցմանը մասնակցել է **19** շրջանավարտ, այն կազմում է հարցվողների 100%-ը, որը առցանց հարցումների տեսանկյունից մասնակցության բարձր ցուցանիշ է:

Հարցմանը շրջանավարտների մասնակցության ցուցանիշներն ըստ տարիների հետևյալն է.

Կրթական ծրագիր	Ուս. տարի	Ուսանող	Մասն.	Տոկոս
Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	2025	19	19	100 %
Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	2024	13	11	84.62 %
		32	**30**	**93.75%**

Մասնակցության ցուցանիշներից ակնհայտ է, որ հարցման արդյունքները արժանահավատ են և կարող են հիմք ծառայել:

Ուսումնասիրության մեջ ներառված հարցերը նպատակ ունեն վերլուծելու շրջանավարտների գնահատականը ստացած կրթության, դրա արդյունավետության և ակնկալիքների ապահովման վերաբերյալ:

Հարցման արդյունքները ընդհանրացված են ըստ կրթական ծրագրի, միջին որակական գնահատականների, ներկայացված են միջին գնահատականով կամ տոկոսով:

Ներկայացնենք հարցման արդյունքները.

2024 թվականին հարցվածների 64%-ը նշել է, որ իրենց ուսումնառության միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կազմում է 18-20, իսկ 36%-ը՝ 13-17: **2025 թվականին** հարցվածներից 68%-ը նշել է, որ ուսումնառության միջին որակական գնահատականը կազմում է 18-20, իսկ 32%-ը՝ 13-17:

Տվյալները ցույց են տալիս, որ համեմատած 2024 թվականի հետ ուսանողների ակադեմիական արդյունքները մի փոքր բարձրացել են 2025 թվականին: Թերևս արժե ուսումնասիրել՝ արդյոք կան համակարգային կամ արտաքին գործոններ, որոնք ազդել են այս փոփոխության վրա, օրինակ՝ ուսումնական ծրագրերի բարդություն, ուսուցման մեթոդաբանություն, գնահատման մոտեցումներ և այլն:



Աշխատանքային զբաղվածության հարցի վերաբերյալ 2024թ. արդյունքներն ընդգծում են, որ մեծ թվով շրջանավարտներ աշխատում են, սակայն միայն մի մասն է աշխատում մասնագիտությամբ: 2025 թվականին նկատվում է աշխատաշուկայում մասնագիտական զբաղվածության զգալի աճ՝ համեմատած 2024-ի հետ:

Այս միտումը կարելի է դիտարկել որպես դրական զարգացում՝ թե՛ կրթական համակարգի արդյունավետության, թե՛ շրջանավարտների կարիերայի մեկնարկի տեսանկյունից:



Շրջանավարտները շարունակում են **բարձր ցուցանիշներ ունենալ մանկավարժական** նոր մեթոդների տիրապետման հարցում: Միևնույն ժամանակ նկատվում է ինքնագնահատականի որոշակի նվազում, ինչը կարող է պայմանավորված լինել աշխատաշուկայի պահանջներով կամ նոր կրթական փոփոխություններով: Այդ պատճառով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մագիստրոսական ծրագրերի գործնական բաղադրիչի ամրապնդմանը և շրջանավարտների շարունակական մասնագիտական զարգացմանը:



ՏՀՏ գործիքներին տիրապետման մակարդակը շարունակում է մնալ բարձր (գնահատականները հիմնականում 4 կամ 5 են): 2025թ. այս ցուցանիշը նախորդ տարվա համեմատ նվազել է՝ կազմելով 47% (նախորդ տարի՝ 91%), որը զգուշացնող ազդակ է՝ ուսումնասիրելու դասավանդվող ՏՀՏ բովանդակությունը, գործնական կիրառումները և չափորոշչային պահանջները:



2024 թվականի ուսումնական տարում **մատուցվող դասընթացների օգտակարությունը** գնահատվել է բարձր, 2025 թվականին ցուցանիշները նվազել են: **Պրակտիկաները** դիտարկվում են որպես օգտակար ուսումնական բաղադրիչ, սակայն բարձր գնահատումների նվազման միտումը մտահոգիչ է: 2025թ-ին մասնակիցների 1/4-ը այլևս չի համարում պրակտիկան բավարար չափով արդյունավետ:

Ներկայացնենք առաջարկներ այս ցուցանիշի բարելավման համար. կազմակերպել ավելի անհատականացված և ոլորտին համապատասխան պրակտիկա, ունենալ հստակ արդյունքներ և նպատակներ պրակտիկայի ընթացքում, հետևողական արձագանք և մենթորություն պրակտիկայի ժամանակ:

Արդյունքները ցուցադրված են գրաֆիկում.



Մագիստրոսական թեզի պաշտպանության գնահատման օբյեկտիվությունից 2025 թվականին ցուցանիշը նվազել է 0.3 միավորով համեմատած 2024 թվականի հետ: Թեև փոփոխությունը կտրուկ չէ, այն ցույց է տալիս որոշակի նվազում բավարարվածության մակարդակում: 4.8 միավորը վկայում է բարձր մակարդակի վստահության և բավարարվածության մասին: 4.5 միավորը դեռևս բարձր ցուցանիշ է, սակայն ենթադրում է, որ որոշ հարցվողներ նկատել են օբյեկտիվության հետ կապված բացեր: Նվազման հնարավոր պատճառներ կարող են լինել անհատական դեպքերը կամ դժգոհությունները՝ գնահատականների ձևավորման ոչ հստակ բացատրությամբ և մեկնաբանություններով պայմանավորված, որոնք ազդել են ընդհանուր բավարարվածության վրա:

Առաջարկվում է՝ պահպանել ուսանողների հետ հետադարձ կապը՝ պարզելու պատճառները և վերացնել հնարավոր թերությունները, ապահովել գնահատման չափանիշների թափանցիկ ներկայացում ուսանողներին:

Չնայած մի փոքր նվազմանը՝ **օբյեկտիվության ընկալման ընդհանուր մակարդակը** շարունակում է բարձր մնալ: Սակայն այս միտումը կարող է ազդակ լինել՝ ավելացնելու վերահսկողական և հաղորդակցման արդյունավետությունը՝ ատեստավորման գործընթացների նկատմամբ:



Մագիստրոսական թեզի **գիտական ղեկավարի աշխատանքից** 2024-ին շրջանավարտները լիովին բավարարված են եղել: 2025-ի ցուցանիշը նույնպես վկայում է բավարարվածության բարձր մակարդակի մասին, սակայն այն ցույց է տալիս, որ որոշակի բարելավման կարիք կա: 2025 թվականի փոքր նվազումը կարող է դիտվել որպես ուշադրության արժանի ազդակ՝ որ բոլոր ուսանողները ստանան անհրաժեշտ աջակցություն:

Առաջարկվում է խուսափել մասնագետներին մեծաքանակ աշխատանքների ղեկավար նշանակելու պրակտիկայից, ինչը թույլ կտա յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ անհատական մոտեցում ապահովել, թեզերի ղեկավարման համար ներգրավել արտաքին շահակիցներ, խրախուսել պարբերական հետադարձ կապը՝ ուսանող-ղեկավար համագործակցության որակի բարելավման նպատակով:



Մասնաճյուղում առկա ռեսուրսներից ընդհանուր բավարարվածությունը բավարար է: Էլեկտրոնային գրադարանից բավարարվածությունը համեմատաբար ցածր է և՛ 2024 թվականին, և՛ 2025 թվականին: 2024 թվականի ցուցանիշի համեմատ արդյունքները 2025 թվականին նվազել են:



«Որքանո՞վ եք գոհ մասնաճյուղի և ֆակուլտետի ղեկավարությունից, պրոֆեսորադասախոսական կազմից, ուսանողների դիմումներին և բողոքներին արձագանքելու ընթացակարգերից և մեխանիզմներից» հարցի վերաբերյալ ստացված պատասխանների հիման վրա գրաֆիկը ունի հետևյալ տեսքը:



Բերված գծապատկերներից ակնհայտ է, որ մասնաճյուղի կողմից **կոռուպցիոն ռիսկերի նվազման և կոռուպցիոն երևույթների դրսևորման բացառման** համար իրականացվող աշխատանքները արդարացված են:



«Ուսումնառության ընթացքում հարկադրվա՞ծ եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով» հարցին 2024 և 2025 թվականներին բոլոր հարցվածները (100%) նշել են, որ մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով հարկադրված վճարելու դեպքեր չեն եղել: Սա վկայում է կրթական գործընթացի արդարության և գնահատման թափանցիկության բարձր մակարդակի մասին:



«Ինչպե՞ս եք գնահատում ԵՊՀ ԻՄ-ում ստացած Ձեր կրթությունը» հարցին նախորդ տարվա ցուցանիշի համեմատ նվազել է 0.5 միավորով, ինչը զգալի տարբերություն է: Սա կարող է վկայում է ուսանողների ընդհանուր բավարարվածության որոշակի նվազման մասին, ինչը լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի:



Չնայած որոշակի նվազմանը 4.4 միավորը դեռ բավականին լավ արդյունք է, սակայն այն հստակ ցույց է տալիս բարելավման անհրաժեշտություն՝ հատկապես երկարաժամկետ որակի կառավարման տեսանկյունից: ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթության գնահատականը շարունակում է մնալ բարձր, սակայն 2025 թվականին արձանագրված նվազումը պետք է դիտվի որպես ազդակ՝ վերանայելու կրթության որակի որոշ բաղադրիչներ և քայլեր ձեռնարկելու ուսանողների գոհունակության մակարդակը վերականգնելու համար:

Հարցման մասնակից 2024 թվականի շրջանավարտների 100%-ը նշել է, որ խորհուրդ կտա իր մերձավորների կրթություն ստանալ ԵՊՀ ԻՄ-ում, 2025 թվականի շրջանավարտների 95%-ը նշել է,որ այո խորհուրդ կտա, 5%-ը՝ ոչ:



Շրջանավարտների կողմից, որպես մասնաճյուղի **երեք հիմնական ուժեղ կողմեր**, ըստ ստացված պատասխանների հաճախականության, նշվել են.

- պրոֆեսորադասախոսական կազմի բարձր որակը և պրոֆեսիոնալիզմը,
- կրթական ծրագրի և գիտելիքի փոխանցման բարձր մակարդակը,
- ուսանողակենտրոն և բարեկամական մթնոլորտը:

Շրջանավարտների կողմից, որպես **մասնաճյուղի թույլ կողմեր նշվել են** մասնավորապես.

- Տեխնիկական և տեխնոլոգիական ապահովվածության խնդիրը,
- Ուսումնական գործընթացի կազմակերպական խնդիրներ-օնլայն ուսուցում, դասաժամերի քիչ քանակ, պրակտիկայի կարճ տևողություն,
- Իրազեկման և տեղեկատվության փոխանակման խնդիրներ:

Որոշ շրջանավարտներ նաև շնորհակալություն են հայտնել մասնաճյուղի ղեկավարներին, դեկանին, պրոֆեսորադասախոսական կազմին՝ բարձր մակարդակով և մրցունակ կրթություն տալու և ջերմ ու ուսանողակենտրոն միջավայր ապահովելու համար:

Կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժին